**314. ՈՐՈՏՆԱ ԲԵՐԴ.** *միջնաբերդի մեջ, սալաքարի վրա.*

Այս է հանգիստ բարեպաշտ իշխանին արքայազուն Սմբատայ,
որ ի կէս աւուրս ի Քս. փոխեցաւ. յիշեցէք ի Քրիստոս. թվ. :ՊՀԹ:

*Գերեզմանաքարի մյուս կողմում քանդակված է ձիավոր, մի ձեռքին խաչ, մյուսին՝ նիզակ, հետապնդում է իր առջևից փախչող 2 կենդանիների:*

*Փափազյան, Գիրք Ե., Ղալայան Գ., 154*

## Լ Ո Ր

*Անցյալում եղել է մեծ գյուղ, այդ պատճառով էլ նրա անունով են կոչվել և ամբողջ ձորահովիտը և թե նրա միջով հոսող Որոտանի վտակը։*

*Գյուղի անունը հիշատակվում է Տաթևի վանքի սահմանները որոշող կալվածագրի մեջ՝ 839 թվից[1]։ Ստ. Օրբելյանի մոտ Լորը գտնվում է Ծղուկ գավառի ցուցակի մեջ և հարկի չափն է 12։*

### ԼՈՐՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

1. «Սպիտակ խաչ» կամ «Լորիկի խաչ». *գտնվում է գյուղից մոտ քառորդ կիլոմետր հյուսիս. դա մի շրջափակ խաչքար—կոթող է, կենտրոնում տեղավորված են երկու խաչքարեր՝ պատվանդանների վրա և բոլոր կողմերից ճարտարապետորեն ձևավորված ու ֆրոնտոնով պսակված։ Հուշարձանը շինված է սպիտակավուն քարով, որից առաջացել է և անունը։ Համաձայն արձանագրության կառուցված է 1271 թ։*

   *Հուշարձանի շուրջը կան մի քանի տափակ ու մեծ գերեզմանաքարեր, խրված գետնի մեջ։*
2. «Մառու» ս. Հովհաննես. *եկեղեցի. գտնվում է գյուղից մոտ 1/2 կիլոմետր հեռու, դեպի հարավ։ Թաղակապ և կոփածո քարերով շինված մի փոքրիկ շենք է. կանգուն վիճակում. հարավից ունեցել է գավիթ, որն այժմ բոլորովին փլած է. շինված է 1686 թ. հարավային պատի մեջ արտաքուստ ագուցված է 1423 թ. խաչքար։*
3. «Սարգսի խաչեր» *մատուռ. գտնվում է գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, մոտ 1/2 կիլոմետր հեռու, ձորամիջին, լեռնալանջի թեքության վրա. շինված է անտաշ և հասարակ քարերով և կիսագետնափոր է, մուտքն արևմտյան կողմից է. կանգուն է. շինված է 1345 թ։*
4. «Տունապան» *մատուռ. գտնվում է գյուղից հարավ-արևելք, գետակի աջ ափի այգիների մեջ. մնացել են հիմնապատերը, որոնց մոտ ընկած մի գրանիտե խաչքարի վրա միայն կա անթվական արձանագրություն, հավանաբար 12—13 դ.։*
5. *Ս. Գևորգ. եկեղեցի. գյուղամիջում. երկու մույթերի վրա թաղակապ շենք է. կանգուն է. շինված է 1666 թ. (արաբական թվանշաններով արձանագրության տակին ավելացված 1664 թ. գրված է հետագայում, սխալ հաշվի արդյունք է)։*



**315. ԼՈՐ. «ՍՊԻՏԱԿ ԽԱՉ» կամ «ԼՈՐԻԿԻ «ԽԱՉ»** *կոթող խաչքարի կամարակալ քարին և խաչքարի տակին. 6 տող.*

ԵՍ ՈՐՈՏՇԱՀ |, ԳՐԻԳՈՐ ՈՒ ԼՈՐԻԿ
ԿԱՆԿՆԵՑ|ԱՔ ՉԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄ
ՀԱՅՐԱ|ՊԵՏԻ ԵՒ ՄՈՒՐ ԻՄ. ՈՎ
ԿԱՐԴԱՑՔ Յ|ԻՇԵՑԷՔ Ի ՔԻ. Ի ԹՎ.
:ՁԻ: ՄԱՄԻԿ:

*Ղալայան, Գ. 102, (խիստ աղճատված)*
*Լուսանկ. տախտ.* XXX, 118

[1] Ստ. Օրբելյան, 205, 232.

**116.** *«ԼՈՌԻԿԻ ԽԱՉ», կոթող-խաչքարի պատվանդանին. 5 տ.*



ԿԱՄԱ[Ի]Ն[Ւ] ՀԶԱԻՐԻՆ ՄՅ'...
ԵՄ] ՎԱՐԴ ՔԱՀԱՆԱ ՑԵՏՈՑ
ՆԿԱՐ|ԵՑԻ ԶՆՇԱՆՍ Ի ԲԱՐԵ-
ԽԱԻՍՈՒԹԻ ԾՆ|ՈՂԱՑ ԻՄ
ԱՄԿՄ. ԵՒ... ԽՈՆ-ԻՆ.
Ի ԹՎ. :ՊԼԶ:



**317.** *«ԼՈՌԻԿԻ ԽԱՉ» հուշարձանի արևմուտքում. գետնի մեջ խրված մեծ և տափակ գերեզմանաքարի երեսին. 9 տ.*

ԱՅՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ԴՈՆԴԻԿԱ | ՈՐ ԿԻՍԱՅԻՐԵԱ
Ի | ՔՍ ՓՈԽԵՑԱՒ—ԶԻՒՐ ՄԱՅ[Ր]Ն] Ա[Ր]ՏԱՍ-
ՎԱՇԱՂԱՂ | ԱՐԱՐ. ՈՎ ԿԱՐԴԱՑ|Ք ԻՇԵՑԷՔ
Ի ՔՍ. Ի ԹՎ. :ՉՀԶ:

*Լուսանկ. տախտ.* XXXI, 119



**318.** *«ԼՈՌԻԿԻ ԽԱՉ» հուշարձանի արևմուտքում գետնի մեջ խրված մեծ և տափակ գերեզմանաքարի երեսին. 11 տ.*

ԵՐՋԱՆԻԿ ԵՒ ԳԵՂԵՑԻ|Կ, ԾԱՂԿԱՑԶԱՐԹ | ,
ԾԱՂԿԱՓԹՈՅԹ, Ա|ՋԱՏ ԱՋԴԷ ԱՋԱ,ՏԱԾԻՆ
ԿՈՀՏՈՒ ԻԴԻ|Թ. ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԷՍ ՏԱՐ|Ի Ի
ՔՍ.....................ԵՒ ԶՊԱՐՍՆ ԱՄԿԱՑ | ՈՒ
ՄԱՄԱԽԱԹՈՒՆԱ|. ՈՎ ԿԱՐԴԷՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Լալայանն ունի սկզբի մասն, աղճատված և խառնած նախորդների հետ. Գ. 162.*



**319.** *«ԼՈՌԻԿԻ ԽԱՉ» հուշարձանի արևմուտքում. գերեզմանաքարի վրա. 4 տող.*

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՄԻՍՐԱ|ՂԻՆ. ԹՎՆ :ՌՃԺԲ:

*Լուսանկ. տախտ.* XXXII, 122

*320. ԼՈՌ. գյուղամիջի ս. Գևորգ եկեղեցու հարավային մուտքի կամարակալ քարին. 10 տող.*



Ի ԹՎՆ ։ՌՃԺԵ։ | ՇՆՈՐՀԻլԻյՔ ԱՄԵ-
ՆլԱյԿԱԼԻՆ Ա̅Ց ՇլԻյՆլԵյՑԻ Ս̅Բ ԵԿլԵյ-
ՂլԵյՑլԻյՍ Ի ՀԱԼԱԼ ՎլԱյՍՏԱԿլՈյՑ
ԻՒՐլՈյՑ ԱԳլՈՒյԼլԵյՑԻ ՄԱՀԴԱՍԻ ՊԵՏ-
ՐՈՍԻ ՈՐԴԻ ԽլՈյՃլԱյՑ ՊՈՂլՈյՍԻՆ ԵՒ
ՈՐԴՈՑՆ ԻՒՐ ՓՌԱՆԴԿՈՒԼԻՆ ԵՒ ՄԻՒՍ
ՀԱՆԳՈՒՑլԵյԱԼ ՈՐԴՈ ԸՍՏԵՓԱՆՈՍԻՆ
ԵՒ ԿՐլՏյՍԵՐ ՈՐԴՈՑՆ ՑլԱյՐլՈյԻԹԻՆ.
ՑԻՇԵՑԻ՟Ք Ի Ք̅Ս Ա̅Ծ. 1664.

*Ղալայան, Գ. 162—163*
*Լուսանկ. տախտ.* XXXI. 120

*321. ԼՈՌ. «ՍԱՐԳՍԻ ԽԱՉԵՐ» մատուռի հարավային պատին. ներքուստ. 11 տող.*



ՑԱՆՈՒՆ Ա̅Ց ԵՍ ՍԱՐԳԻՍ ՈՒ ԱՄԻՐ |
ՀԱՍԱՆ ՆԱՀԱՊԵՏԱՑ ՈՐԴԻ|Ք̅Ս ՇԻՆԵ-
ՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԱՆ|ՈՒՆ Ս̅Բ Ա̅ԾԱԾ-
ՆԻՆ Ի ՓՐԿՈՒԹ̅Ի ՀՈԳ|Ո ՄԵՐՈ ԵՒ
ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ Ա|ԶԳԱԿԱՆԱՑ.
ՈՒ ՏՎԱՔ ԶՄԵՐ ՀԱՐ| ՆԱՀԱՊԵՏՍ.
ՀԱԼԱԼ ԱՐԴԵՄՔ ԳՆԱԾ ՀՈՂՍ Ս̅Բ
ԱԾԱԾՆԻՍ. ՈՎ՝ ՈՐ ՀԱԿԱՌԱԿ ԼԻՆԻ
ԴԱՏԻ Ա̅Ց։ ԻՍ ԴԱՒԻԹ ՈՒ ՄԻՐԱՆ
ԶԱՒԳԱՆՆ ՏՎԱՔ, ՈՎ ՈՐ ԷԼ ՈՒԶԷ
ՄԱԱՆ ԶՈՒԴԱՒ ԱՌՆՈՒ. ԹՎ. ։ՋՂԴ։

*Լուսանկ. տախտ.* XXXI. 121

*322. ԼՈՌ. այգիների մեջ, «Տոնապան» կոչված վայրում, խաչքարի վրա.*



ՑԻՇԷ Ք̅Ս Ա̅Ծ ԶԴԱՒԻԹ.

323. ԼՈՐ. «ԾԱՌՈՒ» ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ եկեղեցու հարավային մուտքի կամարակալ քարին, արտաքուստ. 12 տող:



ՅԱՄԻ ԹՈՒՈՑ ԿԵ|ՆԱՐԱՐԻ
:ՌՄԶ: ԵՒ :Զ: Ի ԵՒ ԸՍՏ
ՀԱՅՈՑ ԹՎԱԿԱՆԻ :ՌՃԼԵ:
Ի ՅՊԱՅՍ ՏՈՒՆՍ . . . . .

. . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . .

ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԻ |
ՈՂՈՐՄԻ | ՅԻՇԵՑԷՔ | Ի ՔՍ

*Արձանագրությունը խիստ հողմահարված է, քարի երեսի մասը շերտերով թափվել է:*

*Վերջին չորս տողը մուտքի կողքին է գրված և կարող է անջատ արձանագրություն լինել:*

324. ԼՈՐ. «ԾԱՌՈՒ» ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ եկեղեցու հարավային պատի ցածրի մասում, արտաքուստ ագուցված խաչքարի ճակատին և շրջանակներին.



ԱՅՍ ԱՐՁԱՆ ԱՒԾԵԼԱԼ ԱՐԵԱՄԲ
ԱՐԱՐՉԻՆ ԿԱՆԿՆԵԱԼ Ի ՄԻՐԱՑ-
ՔԱՆ Է. Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈ ԵՂ-
ԲԱՒՐ ԻՒՐՈՑ ԴԱՆԷԼԻՆ ԵՒ ՀՕՐ-
ԵՂԲԱՒՐ ԻՒՐՈ ՄԱՐԻՆ ԵՒ ԾՆՈ-
ՂԱՑ ԻՒՐՈՑ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.
ԹՎ. :ՊՀԲ:

*325. ԼՈՐ. «ԾԱՌՈՒ» Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ եկեղեցու հարավային կողմի լուսամուտի տակ արտաքուստ ագուցված արձանագրության մաս, մի քարի վրա.*



ՎԵՐԱԿԱՑՈՒ ՍՈՐԻՆ . . .
ԶՏՐ ՍԻՄՈՆԻՆ ԵՒ ՍԱՐԳՍԻ
ՀԱՒՐ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻՈՒՆ...

## ԴԱՐԱԲԱՍ (ՀՆՈՒՄ ԸՂՈՒԵՐԾ)

*Հնում Ըղուերծ անունով երկու գյուղ է գոյություն ունեցել. մեկը Հարանդ գավառում (այժմ Գորիսի շրջան) և մյուսը Ծղուկ գավառում (այժմ Սիսիանի շրջան). առաջինի հարկի չափը եղել է 12 և վերջինի՝ 10։*

*Մեր նկարագրածը նախկին Ծղուկ գավառի Ըղուերծն է, այժմ Սիսիանի շրջանի Լորաձորի հովտում և կոչվում է ԴԱՐԱԲԱՍ։*

*Այս գյուղի անունը առաջին անգամ հիշատակվում է Ստ. Օրբելյանի օգտագործած վավերագրերի մեջ՝ 844 թվին*[1]*։*

*Գյուղում այժմ կան հետևյալ հուշարձանները.*

*1.* Ս. Աստվածածին. *եկեղեցի. համաձայն այժմ ուգոյություն չունեցող արձանագրության, շինել են Տարսայիճ Օրբելյանն ու իր կին Մինախաթունը, 13-րդ դարի երկրորդ կեսին։ Այս եկեղեցուց մնում են այժմ միայն հիմնապատերը, բեմի կողքերին կանգնած մեկական խաչքարեր և շուրջը թափված մի քանի այլ խաչքարեր ու մշակված քարեր։*

*2.* Ս. Ստեփանոս. *եկեղեցի, նախորդից քիչ արևմուտք, փոքրիկ թաղակապ շենք է եղել, կտուրն ամբողջովին թափված է այժմ. շինված է կոփածո քարերով։*

*3.* Գերեզմանատուն. *գտնվում է գյուղի հյուսիսային ծայրին. այստեղ կան խաչքարեր և գերեզմանաքարեր. մի մասն արձանագրված, հնագույնի թվականը 1314.*

Կամուրջ. *գտնվում է գյուղից ներքև, Որոտան գետի վրա. միակամար գեղեցիկ կառուցվածք է, կամարը սրբատաշ քարերով. աջ ափին հենված է քարաժայռերի վրա, իսկ ձախ, ցածր ափը արհեստականորեն բարձրացված է պատնեշներով ու թմբով. համաձայն արձանագրության՝ շինված է 1675 թ.։ Տեղում հայտնի է «Արզումանի կամուրջ» անունով։*



*326. ԴԱՐԱԲԱՍ. ս. Աստվածածին եղեղեցու բեմի հարավից կանգնած խաչքարի և պատվանդանի վրա.*

ԹՎ. :ՉԼՉ: | ՅԱՆՈՒՆ ԱՅ | ԵՍ ՄԱՆՈՒ|ԵԼ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՀԱՒՐ | ԻՄ ՍԵԹ ՔԱՀԱՆԱՒ ՅԻՇԵՑ|ԷՔ Ի ՔՍ.

ՍԱՆՎԵԼ ՔԱՀԱՆԱ ՈՐԴԻ ՍԵԹ ՔԱՀԱՆԱՒ ԵԴԱՆ Ի ՄԻՈՒՄ ՏԱՊԱՆԻ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԱԾ. ՏՂԱՅ ՀԱՍԱԿՆ [Զ]. ԹՎ. :ՋԾԵ:

*Պատվանդանի վրա երեք խորաններ են, որոնցից հյուսիսայինը պարապ է։*

*Լուսանկ. տախտ.* XXXII, 125.
*(Թվականի մասը չի երևում)։*

[1] *Ստ. Օրբելյան, 210*